ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----------2017թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Վիլնյուսի փողոցի հ.121 հասցեում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող շինության 2-րդ հարկից (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 10.08.2006թ հ.2224401 վկայական)՝ 145.4քմ մակերեսով տարածքը, անհատույց օգտագործման իրավունքով, 3 /երեք/ տարի ժամկետով, տրամադրել «Նորաստղ» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպությանը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է «Նորաստղ» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության կողմից զբաղեցված Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Վիլնյուսի փողոցի հ.121 հասցեում գտնվող շինության 2-րդ հարկի (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 10.08.2006թ հ.2224401 վկայական) 145.4քմ մակերեսով տարածքի նկատմամբ 3/երեք/ տարի ժամկետով ձևակերպել կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքը:

Քննարկվող տարածքը 2009 թվականին անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2017 թվականի հունվարի մեկը ժամկետով Նոր Նորք թաղային համայնքի կողմից տրամադրվել էր «Նորաստղ» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպությունը՝ որպես համայնքի հաշմանդամ երեխաների ծնողների աջակցության կենտրոն օգտագործելու համար: Թեև իրավունքը պետական գրանցում չի ստացել, «Նորաստղ» հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպությունը փաստացի տիրապետել է այն:

Կազմակերպության նպատակն է՝ անապահով ընտանիքների երեխաների (հիմնականում հաշմանդամ երեխաների) համար տարբեր հմտությունների ուսուցանումն ու ընկերական միջավայրի ստեղծումը, նրանց առողջության ամրապնդումը, կրթության հնարավորությունը, մասնագիտության ձեռք բերումը, աշխատելը և հասարակության համար լիիրավ անդամ ձևավորելը: Կենտրոնում գործում են տարբեր խմբակներ ՝ նկարչական, անգլերենի, թատերական, (տիկնիկային թատրոն), կերամիկայի, կար ու ձևի խմբակներ, ուր անվճար հիմունքներով հաճախում են ինչպես հաշմանդամ երեխաները, այնպես էլ ոչ հաշմանդամ երեխաներ: Կազմակերպությունը ֆինանսական աջակցություն է ցույց տալիս նաև վիրահատության կարիք ունեցող երեխաներին:

Ելնելով կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունից և անհրաժեշտությունից՝ նպատակահարմար է գտնվել վերոնշյալ տարածքի նկատմամբ ձևակերպելու վերջինիս անհատույց օգտագործման իրավունքը:

Հարկ է նշել, որ քննարկվող տարածքի նկատմամբ կազմակերպության անհատույց օգտագործման իրավունքի ձևակերպման վերաբերյալ առկա են Նոր Նորք վարչական շրջանի և աշխատակազմի հանրակրթության վարչության դրական եզրակացությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ